



ԲՎՐԶՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ

Ք. Երևան
10 հունիսի 2021թ.

ԲԴԽ-38-Ո-Կ-16

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

**ԲՎՐԶՐԱԳՈՒՅՆ ԴԱՏԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴԻ ՆԱԽԱԳԱՀ ՈՒՒԲԵՆ ՎԱՐԴԱՉԱՐՅԱՆԻՆ
ՎԱՐԳԱՊԱՀԱԿԱՆ ՊԱՏԱՄԽԱՆԱՏՎՈՒԹՅԱՆ ԵՆԹՐԿԵԼՈՒ ԶԱՐՑԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ
ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՎԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ՆԻՍՏ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Բարձրագույն դասական խորհուրդը, ծանոթանալով Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի՝ «Բարձրագույն դասական խորհրդի նախագահ Ռուբեն Վարդապարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդությամբ Բարձրագույն դասական խորհրդին դիմելու մասին» 2021 թվականի մայիսի 12-ի թիվ ԿԿ/03/2021 որոշմանը և կից ներկայացված փաստաթղթերին,

Պ Ա Ր Չ Ե Ց .

Կարգապահական վարույթ հարուցելու առիթ է հանդիսացել «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքի 25-րդ հոդվածի 9-րդ և 9. 1-րդ մասերը:

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի 12. 05. 2021 թվականի թիվ ԿԿ/03/2021 որոշմամբ միջնորդություն է ներկայացվել Բարձրագույն դասական խորհրդին՝ Բարձրագույն դասական խորհրդի նախագահ Ռուբեն Վարդապարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ:

ՐՅայասանի Յանրապետության դասական օրենսգիրքի սահմանադրական օրենքի 150-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝ դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու հարցը Բարձրագույն դասական խորհուրդը քննում է կարգապահական պատասխանատվության ենթարկելու մասին

միջնորդությունն ստանալու պահից եռամսյա ժամկետում:

«Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 84-րդ հոդվածի 11-րդ մասի համաձայն՝ Բարձրագույն դատական խորհրդի նախագահը հրավիրում և վարում է Բարձրագույն դատական խորհրդի նիստերը, ստորագրում է Բարձրագույն դատական խորհրդի որոշումները, ներկայացնում է Բարձրագույն դատական խորհուրդն այլ մարմինների հետ հարաբերություններում, ինչպես նաև իրականացնում է Բարձրագույն դատական խորհրդի բնականոն գործունեության ապահովմանն ուղղված այլ լիազորություններ:

«Բարձրագույն դատական խորհրդի աշխատակարգը հաստատելու մասին» 22.10.2020թ. թիվ ԲԴԽ-68-Ե-15 որոշման հավելվածի 91-րդ կետի համաձայն՝ խորհրդի նախագահը դատավորին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ վարույթի բոլոր նյութերը ստանալու պահից մեկամսյա ժամկետում թմարկման համար նշանակում է խորհրդի նիստ: Միջնորդությունը և վարույթի նյութերը խորհրդի անդամներին է ներկայացվում նիստից առնվազն 10 օր առաջ:

Հիմք ընդունելով վերոգրյալը և ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության դատական օրենսգիրք» սահմանադրական օրենքի 84-րդ հոդվածի 11-րդ մասով, Բարձրագույն դատական խորհրդի աշխատակարգը հաստատելու մասին 22.10.2020թ. թիվ ԲԴԽ-68-Ե-15 որոշման հավելվածի 91-րդ կետով,

Ո Ր Ո Շ Ե Ց .

Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի կողմից ներկայացված՝ Բարձրագույն դատական խորհրդի նախագահ Ռուբեն Վարդապարյանին կարգապահական պատասխանատվության ենթարկելու վերաբերյալ միջնորդության թննության կապակցությամբ Բարձրագույն դատական խորհրդի նիստը նշանակել 2021 թվականի հունիսի 14-ին, ժամը 17⁰⁰-ին՝ Բարձրագույն դատական խորհրդի վարչական շենքում /թ. Երևան, Կորյունի 17/:

**ԲՎՐԶՐՎԳՈՒՅՆ ԴՎՏՎԿՄԵ ԽՈՐՀՐԴԻ
ՆՎՆՎԳԱՅԻ ՊԱՇՏՈՆԱԿՎԱՏՎՐ՝**

Գ. ԶՅՎԵԳԻՐՅԱԼ